ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիսի 2021 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱՑԱՆՑԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԱԶԱՏ ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՄԱՆ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հուլիսի 1-ի գրությունը, որով Ընկերությունը հայտնել է, որ Երևան քաղաքի Դեմիրճյան 2/3 հասցեում վարձակալության հիմունքներով «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակություն հնարավոր չէ տրամադրել, քանի որ նշված հասցեում ենթակառուցվածքներ, այն է՝ տվյալ շենքը մուտքի խողովակներ չունի,

բ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի հուլիսի 6-ի գրությանն ի պատասխան Ընկերության 2021 թվականի հուլիսի 9-ի գրությունը, որով վերջինս, Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 5-ի №593Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից հանրային ամրակցված հեռախոսացանցի գծերի ենթակառուցվածքների գտնվելու վայրի և առկա թողունակության մասին տեղեկությունների տրամադրման կարգի պահանջներին համապատասխան, ներկայացրել է Երևան քաղաքի Դեմիրճյան 2/3 շենք մուտք գործելու համար անհրաժեշտ ստորգետնյա խողովակաշարերի բացակայության վերաբերյալ տեղեկատվություն,

գ) Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները (այսուհետ՝ Կանոններ), որի 17-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գերիշխող օպերատորը իրավասու է մերժել օպերատորի դիմումը, եթե Հանձնաժողովին ապացուցի, որ պահանջվող վայրում (հասցեում) ենթակառուցվածք (խողովակ) չունի, իսկ Կանոնների 19-րդ կետի համաձայն՝ եթե դիմումը մերժելու հիմք է հանդիսանում Կանոնների 17-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված պայմանը, ապա դիմումը մերժելու հիմքի ապացույց կարող է համարվել նաև Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 5-ի №593Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ գերիշխող օպերատորի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկությունները,

դ) որ ուսումնասիրելով Ընկերության դիմումը մերժելու պատճառ հանդիսացող հիմնավորումները (այդ թվում՝ կից ապացույցները), Հանձնաժողովի դիտարկմամբ, առկա են Ընկերության կողմից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքեր՝ ելնելով այն հանգամանքից, որ Ընկերությունը Երևան քաղաքի Դեմիրճյան 2/3 շենք հասցե մուտք գործելու համար անհրաժեշտ ստորգետնյա խողովակաշար չունի, և

հիմք ընդունելով Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընդունել Ընկերության կողմից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքերի առկայությունը և թույլատրել Ընկերությանը մերժել դիմումը:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշումը հրապարակվելուց հետո երեսուն օրվա ընթացքում Հանձնաժողովին հասցեագրված միջնորդության հիման վրա կարող է վերանայվել.
2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2021թ.